



Մարդիկ են կերտում դարաշրջանը՝ կերտում են մտքի և բազկի ուժով; Եվ այդ մարդկանց շնորհիվ է, որ պատմության անիվը ևս մի պտույտ է անում դեպի առաջ:

Բախչի Խաչատուրի Ասատրյանը ծնվել է 1924թ. Նախիջևանի Ինքնավար Մարզի Աբրավանիսի շրջանում: 1934թ., մոր մահից հետո, հոր հետ տեղափոխվել է Երևան, այնտեղից էլ՝ Վեդու շրջանի Դաշու գյուղ: Սովորել է Վեդու դպրոցում և միաժամանակ աշխատել Դաշու գյուղում որպես գառնարած: Աշխատել է նաև որպես հաշվային աշխատող, կինոմեխանիկ,-ադմինիստրատոր:

1942թ. զորակոչվել է խորհրդային բանակ, ավարտել է ռազմական ուսումնարանը՝ սերժանտի կոչումով:Որպես տանկիստ 1944թ. մասնակցել է Լենինգրադյան ռազմաճակատում մղվող մարտերին, վիրավորվել է, ստացել այրվածքներ: Բուժվելուց հետո որպես հրետանավոր ուկրանիական ռազմաճակատներում մասնակցել է մարտերի, մասնակցել է Քիշինևի համար մղվող մարտերին, 13-րդ դիվիզիայի կազմում՝ Լեհաստանի և Հունգարիայի ազատագրմանը: Պատերազմը ավարտել է Հունգարիայում:

Պարգևատրվել է I աստիճանի շքանշաններով, „Կարմիր աստղ,, շքանշանով, „Արիության համար,,մեդալով և հորբեյանական մեդալներով:

Պատերազմի ավարտից հետո աշխատել է Արարատի շրջանի մի շարք ձեռնարկություններում, Կիրովի անվան սովխոզում որպես գլխավոր հաշվապահ: Անբասիր

աշխատանքով վաստակել է ղեկավարության և հասարակության սերն ու համակրանքը, ղեկավարության կողմից պարգևատրվել է մի շարք պարգևներով:

Բախշի Ասատրյանը վախճանվեց 11.05.2012թ.:

[00000000 00000 0000000000 000000000](#)





